

հանջելու որ հայ ծէսը անվթար մնար Լե-  
հաստանի մէջ. եւ առ այդ պատուիրակ մը  
ուղարկեց Լեռպոլիս իրբեւ պաշտպան հայ  
ծէսին եւ էջմիածնի իրաւունքներուն :

Սիրով եւ գթութեամբ, առի հանդէպ  
տառապակոծ Ազգին, ան շարունակ հետա-  
մուտ եղաւ զայն տփոփելու, ակնկալութեամբ  
քրիստոնեայ Եւրոպայի օժանդակութեան,  
եւ նոյնիսկ ութսունամեայ տարիքին չվարա-  
նեցաւ հրահրելու ազատագրական շարժումը  
գլխաւորելով պատուիրակութիւն մը դէպի  
Հոռոմ :

Երես տաժանակիր քամրորդութենէ մը  
ետք, յորում յանախ հալածանքի եւ կեղե-  
քումի թիրախ դարձաւ, երբ յոգնաբեկ հա-  
սաւ Կ. Պոլիս, անմիջապէս ձեռնարկեց վերջ-  
նական հաշտութեան մը եղիագար հակաթո-  
կաթողիկոսին հետ ի սէր իր Աթոռին եւ Ազ-  
գին : Եւ երբ կը պատաստուէր Հոռոմ մեկ-  
նելու, կառավարական ձգձգումներու հետե-  
ւանով, սրտի ցաւէն եւ տառապանքներէ  
հիւծած վախճանեցաւ 82ամեայ տարիքին,  
կաթողիկէ դաւանանքի աչքառու վկայու-  
թիւն մը եւս տալով յետագայ հայ սերունդ-  
ներուն :

Սիմէոն Կաթողիկոս կը կոչէ Յակոբ  
Ջուղայեցիին՝ «այր հոգեբնկալ եւ առաջինի,  
իմաստուն եւ հանճարեղ, հեղ եւ երկայնա-  
միտ» . Առաքել Դարիժեցի գինք կը բնորոշ-  
ելու բառով. «Մեծահոգ եւ երկայնամիտ